

ՀԱՅ
ԵՌԺՈՂԿՐԾԱՏ

ԲԺ. Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

Ի՞նչ է ԱՐԵԼ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ՈՒՆ-ԼՈՒՈՒՆ-
ՎՈՐՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

№ 5

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1929

616.9

D-15

30 JUL 2010

616.9

2-15

uy

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԼԵՔՍԻՔԱՆԻ ՄԱՐԿԱ

№ 5 ՍԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 5

ԲԺ. Ս. ՂԱԶԱՐՅԱՆ


ԻՆՉ Ե ԱՐԵԼ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ.— ՅԵՐԵՎԱՆ, 1929

18.06.2013

18905



48853 ՌԽ



6584-53

ԽՆԶ Ե ԱՐԵԼ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԱԿԻԶ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Դեռ շատ հնուց հայտնի լին վարակիչ հիվանդությունները:

Նրանցից շատերը՝ ժանտախտը, խոլերան, թոքախտը և ծաղիկը շատ մեծ զոհեր են տալիս և չերկար ժամանակ մարդկության սարսափի մեջ պահել:

Խոչոր համաճարակների ժամանակ մեր նախնիքները կռվի իրական միջոց չեն ունեցել, քան թողնել հիվանդներին անխնամ և սարսափահար փախչել քաղաքներից ու գյուղերից լեռներն ու հեռավոր վայրեր:

Հին դարերում ամենամեծ ավերիչները լեղել են ժանտախտը և խոլերան:

14-րդ դարում ժանտախտը Յեվոպայում և Ասիայում տարել է մի քանի տասնյակ միլիոն զոհեր: Նա հնձել է այն ժամանակվա ազգաբնակչության կիսից ավելին և հայտնի չէ լեղել «սև մահ» անունով:

Վերջին հարյուր տարվա ընթացքում խո-

Հր. № 1128: Դրանեպար № 2871 (բ): Տիրած 3000:

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում:
Պատվեր 174.

լերան Ռուսաստանում յերեք միլիոն մահացութիւն եւ պատճառել:

Վոչ պակաս առատ հունձ եւ ունեցել բնական ծաղիկը մինչև 19-րդ դարը:

Բոլոր այն վայրերում, ուր հայտնվել եւ ծաղիկ հիվանդութիւնը և ուր անծանոթ են յեղել նրա դեմն առնելու միջոցներին, առատ հունձ եւ ունեցել յերեխաների մեջ:

Մինչև այսօր ել արեւելքում խուլ վայրեր կան, ուր ծաղիկը մասսայական գոհեր եւ տանում, չնայած վոր նրա դեմն առնելու միջոցն արդեն շատուց եւ գտնվել և գործադրվում ե լուսավոր յերկրներում:

Դա ծաղկի շինուկի պարսպի պատճառովն ե:

Բժավոր և վորովայնի տիֆը մինչև որս ել խոշոր գոհեր են տանում հետամնաց-յերկրներում, այնինչ Արեւմտյան Յեւրոպան ազատ ե այդ հիվանդութիւններից:

Հասարակական մեծ չարիքների շարքին են պատկանում՝ մալարիան, թոքախտը և սիֆիլիսը:

Մալարիան այսօր ել խոշոր ավերումներ ե կատարում շատ յերկրներում, ինչպես և մեզ մոտ՝ Կովկասում ու Թուրքեստանում, չնայած, վոր պրոֆիլակտիկան ու բուժօգնութիւնը որ

ավուր ուժեղանում ու կատարելության են հասցնում իրենց պայքարի զենքերը:

Մալարիան իր մասսայական գոհերը տանում ե, մանավանդ, հարավային տաք յերկրներում, ուր ազգաբնակչության մեծ զանգվածներն ապրում են ճահճոտ վայրերում և գործ ունեն բրնձի և այլ հողագործական մշակութիւնների հետ:

Թոքախտն այսօր իրավամբ պրոլետարիատի չարիք ե համարվում, վորովհետեւ նա գործ ունի առավելապես հյուծված, անապահով և ներքնահարկերում ու խցուղերում ապրող զանգվածների հետ:

Իսկ սիֆիլիսը կապված ե անկուլտուրական ու սնտիրապաշտ ժողովուրդների հետ և տարածված ե այն յերկրներում, ուր մեծ ծավալում ունի նաեւ արկոհողիզմը:

Այսօր ել կան բազմաթիւ վարակիչ հիվանդութիւններ, վորոնք քիչ փասս չեն հասցնում մարդկության, բայց նրանք այլեւ առաջվա ավելի բնույթը չունեն:

Ներկայումս շատ վարակիչ հիվանդութիւններ համարյա թե վերացել են Արեւմտյան Յեւրոպայում. որինակ, ծաղիկը, բժավոր ու վորովայնի տիֆը, իսկ շատ հիվանդութիւններ ել թուլացել են, ինչպես թոքախտը Նոր-Չելանդիայում, Նորվեգիայում և Շվեյցիայում:

Ինչով բացատրել այդ ամենը. ինչու այլևս մեր նախնիքի նման համաճարակների ժամանակ սարսափահար չենք թողնում մեր հիվանդներին անոգնական ու մեր բնակավայրերից չվում լեռները: Կամ թե ձեռքներս ծալում և ապավինում «աստծու և սրբերի ամենակարողության»:

Շատ պարզ է:

Այսու մենք գիտենք վարակիչ հիվանդությունների տարածման պահանջները, նրանց հասկությունները յեվ նրանցից շատերի դեմ կոմբիում միջոցները, վորոնց վրա մեկ դար աշխատանք են քափել լավագույն գիտնականները:

Այդ գիտնականներից շատերը զոհ են գնացել համաճարակների դեմն առնելու աշխատանքների ժամանակ:

Վարակիչ հիվանդությունների, հատկապես մանրեների ուսումնասիրության գործում ֆրանսիացի մեծ գիտնական Պաստորը իրավամբ համարվում է հայր:

Նա յեր առաջինը, վոր հաստատեց, թե միկրոբները կամ մանրեները պատահական գոյություններ չեն, այլ վոր նրանք, թե բնություն և թե, մանավանդ, հիվանդությունների մեջ, խաղում են շատ կարևոր դեր:

Նույն կարծիքին է հանգել միաժամանակ նաև մի այլ խոշոր գիտնական՝ գերմանացի Ռոբերտ Կոխը:

Պաստորն ու Կոխը համարվում են մանրեաբանական ուսմունքի հիմնադիրները:

Այնուհետև նրանց աշակերտներն աշխատել են այդ ուսմունքն ել ավելի խորացնել ու նրա շրջանակները լայնացնել:

Մանրեների կյանքն ուսումնասիրելով, Պաստորը հանգեց այն յեզրակացության, վոր մանրեները գտնվում են բնության մեջ ամեն տեղ և առաջանում են նման մանրեներից:

Ասել է թե՛ կյանքի մեջ չկան անսպառակ ծնունդներ, այլ վոր՝ «ամեն կենդանի գոյություն առաջանում է իր նման կենդանի գոյությունից»:

Նման յենթադրությունը գիտության հիմք դարձավ և խոշոր դեր խաղաց վարակիչ հիվանդությունների լուսաբանության գործում:

Մանրեների ուսումնասիրության մեջ կարևոր դեր է խաղացել միկրոսկոպը, առանց վորի անհնար եր մանրեները տարբերել իրարից և վորոշել նրանց տեսակները:

Մինչ Պաստորը բավականաչափ զարգացած են յեղել բնագիտության յերկու ճյուղերը՝ ֆիզիկան ու քիմիան:

Դեռ ևս 17-րդ դարուց գոյություն ունեին ակնաբուժական պարագաներ, մեծացնող ապակիներ և միկրոսկոպ: Սակայն ժամանակի գիտ-

նականները թեև միկրոսկոպի տակ տեսնում եյին մանրենները, բայց գաղափար չունեցին նրա քայքայիչ դերի մասին:

Հիմք ընդունելով այն ճշմարտությունը, թե մանրենները ծնվում են իրենց նմաններից և զարգանում են ամեն տեղ, բնականորեն, գիտնականները հանգել են այն լեզրակացության, թե՝ վոյցնացնելով մանրեները կարելի չէ վերջ տալ նայելով նրանց գոյության եվ հետագա զարգացման: Նման տեսությունն առաջ բերավ ամբողջ մի շարժում վարակիչ հիվանդությունների դեմ վարելիք պայքարում: Գիտությունը մշակել սկսեց միկրոբների վոչնչացման բազմաթիվ մեթոդներ:

Գիտական բազմաթիվ տվյալներով հաստատված է նաև այն փաստը, վոր մանրեններն ապրում են վոչ միայն հիվանդ որդանիզմներում, այլև նրանց կրում են առողջ մարդիկ, վորոնք հիվանդությունից կամ նոր են առողջացել կամ շփման մեջ են լեղել հիվանդների հետ: Այդպիսի մարդիկ մանրեններ կրողներ են և, հետևապես, հանդիսանում են վարակիչ հիվանդությունների տարածողներ:

Մանրեններ գտնվում են նաև ողի, ջրի, հողի մեջ, բնակարաններում, հագուստներում և անհամթերքներում:

Այնուհետև գիտնականները պարզել են մանրենների ազդեցությունը կենդանի որդանիզմների վրա, ուսումնասիրել են մանրենների արտադրած թուլնը՝ տոկսինները, վորոնցով նրանք թուլափորում են կենդանի գոյություններ:

Այնուհետև մանրեաբանությունն այնքան է խորացել, վոր գիտնականները մանրենների վոչնչացման համար դիմել են վոչ միայն արտաքին միջոցների՝ դեզինֆեկցիայի, այլ և գտել են, վոր ամեն կենդանի որդանիզմ իր մեջ ունի ինֆնապատեսպանության մի գարմանալի գորություն՝ կովել իրեն nsար նյութերի դեմ, վորոնց մեջ՝ նայելով մանրեների:

Հիմնվելով մեր որդանիզմի ինքնապաշտպանության այդ հզոր միջոցի վրա, գիտնականներն այն դարձրին վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի կարևոր միջոց: Գիտության տվյալներով զինված, նրանք աշխատեցին ուժեղացնել մեր որդանիզմի այդ բնածին մեծ հատկությունը:

Մարդկային ինքնապաշտպանության աշխատանքների գաղտնիքի խոշոր պարզաբանողը լեղել է ուսս անվանի գիտնական Մեչնիկովը, վորը չկարողանալով տանել ցարական ռեժիմը, Ռուսաստանից հեռացավ Փարիզ, ու Պատտորի անվան ինստիտուտում կատարել է իր աշխատանքների մեծագույն մասը:

Մեջնիկովը մարդու որգանիզմի մեջ գտել է հակամամրեական նյութ, վորը լուծելով մանրեներին, նրանց թույնը դարձնում է անուժ:

Անհոսոկսիների հրաշալի գլուտն այսոր վարակիչ հիվանդութիւնների դեմ մղվող պայքարի կարևոր գործոնն է հանդիսանում:

Ըստ Մեջնիկովի տվյալների, պարզվում է, վոր կենդանի որգանիզմն ոժտված է բջիջների մեծ քանակով, հատկապես տեղավորված արյան և ներքին գործարաններում, վորոնք ընդունակ են միանալ մանրեններին և կլանել նրանց: Դա Մեջնիկովի Ֆագոցիտների հայտնի տեսութիւնն է:

Հենվելով կենդանի որգանիզմի այդ առանձնահատկութեան վրա, գիտնականներն սկսել են արհեստական միջոցներով ուժեղացնել մարդու որգանիզմը հակամիկրոբային նյութերով, այլև բազմացնել միջ որգանիզմի ֆագոցիտները, այսպես կոչված նախագոցուական ներարկումներով:

Հակամիկրոբային նյութերը, վորոնք ստացվում են կենդանիների արյունից, գործածվել սկսեցին վորպես բուժիչ միջոցներ, ինչպես, որինակ՝ հակադիֆտերիտային շիճուկը:

Բայց վոր կարևորն է, միաժամանակ սկսեցին ուսումնասիրել այն պատճառները, վորոնք

մի կողմից՝ մարդին դարձնում են դիմացկուն հիվանդութիւնների հանդեպ, իսկ մյուս կողմից՝ արտաքին պայմանները, վորոնք չեն նպաստում մանրենների զարգացման: Այնպես վոր, ահընհայտնի դարձրին այն վճռական դերը, վոր հիվանդութիւնների տարածման մեջ խաղում են թույլ որգանիզմը, անբավարար սնունդը, ցուրտը, բնակարանային վատ պայմանները, ախտոտ ջուրը և հողը:

Այսպիսով շատ բաներ, վոր մեր նախնիքները չգիտեցին և գաղտնիք եյին նրանց համար, այժմ պարզել է գիտութիւնը և մենք դուրսութեամբ գործադրում ենք համաճարակների դեմ և պաշտպանվում:

Դործնական մեծ նշանակութիւն ստացան զանազան հայտնաբերութիւններ վարակիչ հիվանդութիւնների բնագավառում: Այդ գլուտները բուժողնութեան տվին այնպիսի հզոր նորութիւններ, վորոնց գործադրութեամբ վորոշ հիվանդութիւններ կամ չեղոքացվում են կամ թե իսպառ բուժվում:

Վաղուց հայտնի լե, որինակ, վոր մալարիան իր մեծ ավերումներն անում է տաք ու խոնավ յերկրներում: Հնում մալարիան կապում եյին հողի գոլորշիացման հետ և պատճառը համարում միազմները:

Յերկար ժամանակ մարդկությունն անուժ
եր մալարիայի ավերումների դեմն առնել: Ըն-
դամենը հիսուն տարի առաջ եր, վոր ֆրանսի-
ացի դիտնական Լավերանը, մալարիայով հիվանդ
մարդու արյան վրա կատարած իր հետազոտու-
թյունների ժամանակ, միկրոսկոպով հայտնաբե-
րեց մալարիայի միկրոբը. իսկ հետագայում,
նույն միկրոբը գտնվեց նաև մոծակի որդանիդ-
մում: Այժմ միայն դիտենք, վոր առողջ մարդը
մալարիայով հիվանդանում ե միմիայն մոծակի
միջոցով:

Մալարիայով հիվանդ մարդը վարակում ե
մոծակին, իսկ վերջինս՝ առողջ մարդուն:

Այս գլուտն արդյունք ե յերկար տարինե-
րի անխոնջ աշխատանքների, յերբ դիտնական-
ները փորձեր եյին անում իրենց և իրենց մեր-
ձավորների վրա:

Այդ գլուտից հետո յե, վոր մեզ համար
պարզվում ե, թե ինչու խոնավ և տաք յերկր-
ներում մալարիան ուժեղ ե, վորովհետև խոնավ
տեղեր են շինում իրենց բները, աչտեղ են
բազմանում մեծ թվով մոծակներ, վորոնք մալա-
րիայի տարածողներն են:

Այստեղից հետևում են պայքարի նորանոր
ձևեր, վորոնք ուղղված են թե մալարիա հիվան-
դության դեմ և թե առաջադրում են մի շարք

միջոցներ, վորոնցով կարելի յե վոչնչացնել մո-
ծակները և պաշտպանել մարդուն նրանց խա-
ծից:

Անգամ մեր փոքրիկ յերկրի ուսանելի փո-
ճը ցույց ե տալիս, վոր հետևողական ու գիտու-
թյան ընձեռած պայքարի նորագույն ձևերով կա-
րելի յե մալարիան թուլացնել և դրական հետե-
վանքների հասնել:

Արարատյան դաշտավայրի շատ գլուղեր,
վորոնք յերկար ժամանակ տառապում եյին մա-
լարիայի ձեռքին և տնտեսական ու ֆիզիկական
մեծ կորուստներ ունենում, վերջին յերեք-
շորս տարվա համառ պայքարից հետո, այդ շըր-
ջանների աշխատավորությունը վոչ միայն ֆի-
զակապես ե սկսել կազդուրվել, այլ և տնտեսա-
պես:

Չալթուկի վոչնչացումով ու ճահիճների չո-
բացումով, ինչպես և մեր տրոպկայանների կող-
մից հասցրած բուժոգնության շնորհիվ, մալա-
րիայից սերհատված մեր մի շարք գլուղեր, վո-
րոնց ազգաբնակչության աճեցողությունը կանգ
եր առել, ներկայումս նորից նորմալ ծննդաբե-
րություն ունեն:

Իտալիայում շատ պտղավետ ու բուսակա-
նությամբ հարուստ շրջաններ, վորոնք մալարի-
այի պատճառով անմարդաբնակ եյին առաջ-

ները, այսօր, գիտութեան ընձեռած պայքարի շնորհիվ, նորից բնակելի յեն դարձել և նորից յեռում ե կյանքը:

Յերկար տարիների մանրագնսին հետագոտութունների արդյունք պիտի համարել խուրաչի վերբրոնի, թոքախտի բացիլի, սիֆիլիսի սպիրոխետի և այլ մանրենների գլուտերը և նրանցից հետևող բուժոգնութեան նորագույն միջոցները, վորոնց շնորհիվ այսօր շատ հիվանդութուններ զգալիորեն թուլացել և կորցրել են իրենց սուր վարակչութունը:

Փայլուն հետևանքներ տվին բնական ծաղկի, դիֆտերիաի, սապի և ջրվախութեան դեմն առնելիք ներարկման գլուտերը:

Առաջին անգամ անգլիացի Նդվարդ Զենները ցույց տվաւ, վոր կովի ծաղկի պատվաստումը մարդուն, ազատում ե նրան բնական ծաղկի վտանգից:

Ներկայումս ծաղկի պարտադիր պատվաստումն ըստ Զենների, ընդունված ե համարյա բոլոր պետութուններում և տալիս ե փայլուն հետևանքներ:

Բնական ծաղկի վտանգը Յեվրոպական յերկրներում այլևս գոյութուն չունի:

Յերեխաների մեջ ծաղկից քիչ զոհեր չեր տանում դիֆտերիա հիվանդութունը. մինչդեռ

այսօր, շնորհիվ հակադիֆտերիալին շիճուկի, այդ հիվանդութունը ևս անվտանգ ե դարձել:

Դիֆտերիաի շիճուկն ստացվում ե ձիերի արյունից, վորոնց նախապես վարժեցնում են դիֆտերիաի թուլսին:

Հակադիֆտերիալին շիճուկը միաժամանակ գործ ե ածվում և՛ վորպես նախազգուշական, և՛ վորպես բուժոգնութեան միջոց:

Սապ և ջրվախութեան հիվանդութունների դեմն առնելիք ներարկումների գլուտը պատկանում ե Պաստորին: Այդ հիվանդութունների հակաշիճուկը մի ժամանակ պատրաստվում եր միայն Պարիզ, Պաստորի ինիստիտուտում, իսկ այսօր պատրաստում են շատ ուրիշ յերկրներ:

Այսօր մենք մեծ փորձառութուն ունենք նաև խոլերայի և վորովայնի տիֆի դեմ վարելիք պայքարի ասպարիզում: Գիտենք, թե ինչ խոշոր դեր են կատարում այդ համաճարակների տարածման գործում ջուրն ու ախտոտ հողը: Ուստի մեր պայքարն ուղղելով վերջիններիս դեմ՝ խոշոր չափով թուլացնում ենք այդ հիվանդութունները:

Այն քաղաքներն ու գլուղերը, վորոնք ունեն խմելու մաքուր ջուր և կանոնավոր կոյուղի, այնտեղ այդ հիվանդութունները չեն զարգանում և տարածվում:

Բացի այդ, ներկայումս գիտությունը նախադրուշական ներարկումներ է կատարում խոլերայի և վորովայնի տիֆի դեմն առնելու համար:

Ինչ վերաբերվում է թոքախտին ու սիֆիլիսին, մարդկության այդ խոշորագույն ավերիչ-ներին, գիտությունը նրանց դեմ ևս պայքարի մեծ հնարավորություն է ստեղծել: Այսօր մենք գիտենք, թե առավելապես ինչ պայմաններում են զարգանում ու տարածվում այդ հիվանդությունները, հետևապես դուրանում է նաև նրանց դեմն առնելիք կուլի ձևերը:

Թոքախտի տարածումը, ինչպես վերն ասացինք, մեծ կապ ունի պրոլետարիատի հետ, վորովհետև նա սիրում է իր ցանցերը տարածել աշխատանքից հյուծվածների, սակավարյունների, վատ ու անբավարար սնվողների շրջաններում, վորոնք ապրում են մութ ու խոնավ բնակարաններում: Դրա համար էլ աշխատավորության սոցիալ-տնտեսական դրության բարելավումը, ինչպես և աշխատանքի պայմանների դուրացումը, առաջնակարգ նշանակություն ունի թոքախտի դեմ վարելիք պայքարում: Այդ ուղղությամբ էլ Խորհրդային իշխանությունը պետական միջոցներին խոշոր դրամական հատկացումներ է անում թոքախտի դեմ վարելիք պայքարին, հիմ-

նում է հանգստատներ, սանատորիաներ, դիսպանսերներ, բայց վոր գլխավորն է, ձգտում է միևնույնի հասցնել բանվորության աշխատանքի ժամերը ծանր արդյունաբերության մեջ: Յոթ ժամյա աշխատանքը մեզ մոտ վոչ միայն լոգունգ է, այլ և արդյունաբերության վորոշ ճյուղերում արդեն ունի իր գործադրությունը: Մեծ ուշադրություն է հատկացվում ներկայումս նաև բանվորության բնակարանային շինարարության վրա: Յեվ դա բնական է, վորովհետև նոր կենցաղի խնդիրները սերտ կապ ունեն ըստ ամենայնի հարմար ու հիգենիկ բնակարանների հետ:

Սիֆիլիսը մի կողմից հյուծում ու աշխանդակում է հիվանդին, իսկ մյուս կողմից քայքայում է սերունդները: Գիտական հետազոտություններն ու ժամանակակից հասարակական պայմանների ուսումնասիրությունը գծել են պայքարի այն հիմնական ուղին, վորը կապված է հին հասարակական խաբխուլ ձևերի և կնոջ հետամնացության ու իրավագրկության հետ:

Սիֆիլիսի դեմ պայքարն այսօր տարվում է այն ուղղությամբ, վոր մի կողմից հնարավորինի վերացնել հին հասարակարգի աղջատված ու աշխանդակ ձևերը և նրանց փոխարինել ավելի կուլտուրական ու բարձր ձևերով, իսկ մյուս կողմից՝ ազատագրել կնոջը իր կապանքներից և

նրան դարձնել տղամարդուն հավասարազոր և գործունակ պետական ու հասարակական ասպարեզներում: մի բան, վորին հասել է խորհրդային կինը Հոկտեմբերյան հեղափոխութունից հետո:

Բացի հասարակական պայքարի ձևերից, գիտութունը լարել է իր ուժերը պայքարի ավելի արմատական միջոցներ գտնելու թոքախտի ու սիֆիլիսի դեմ, վորպիսին հաջողել է նրան հասարակական այլ ավերիչների դեմ:

Յեթե մի հետադարձ հայացք նետենք վարակիչ հիվանդութունների և նրանց անցած յերկար, դարերի հեռավորութուն ունեցող ճանապարհի վրա, կտեսնենք, վոր գիտութունն ընթացել է ուղիղ և հաղթական: Նա մարդկութունն ազատել է մեծամեծ պատուհաններից:

Բուժոգնությանը զուգընթաց գիտության գծած այսորվա նախագգուցական միջոցները վարակիչ հիվանդութունների դեմ, լավագույն գործը պիտի համարել և պիտի աշխատանք չխնայել այդ բանը սեփականութուն դարձնելու մեր աշխատավորության լայն խավերի:

Մեր բանվորութունը դեռ ևս պակաս կուտուրական է և առողջապահական գիտելիքների մեջ քիչ գրագետ: Պիտի բարձրացնել նրա կուտուրական մակարդակը և նա կարող կլինի հաջող պայքարել մարդկության ավերիչների՝ վարակիչ ախտերի դեմ:

ԼՈԶՈՒՆ ԳՆԵՐ

— Պայքարիր անմաքուր, խոնավ ու խավար բնակարանների դեմ, նրանք վարակիչ հիվանդութունների բներ են:

— Ուր չկա լույս, ոգ և արևի ճառագայթներ, այնտեղ զարգանում են վարակի մանրէները:

— Կեղտը, անմաքուր ջուրը, թարմ ոգի բացակայութունը, անբավարար ու վատ սնունդը, — սրանք են հիվանդութունների տարածման գլխավոր ազդակները:

— Վարակիչ հիվանդութունների դեմ հաջող պայքար վարելու համար պիտի գրագետ լինել առողջապահական գիտելիքների մեջ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0279983

1930/29
Գիրք 4 կռպ. Մ. ($\frac{5}{8}$ լ.)



Докт. А. Казарян.
ЧТО ДЕЛАЛА НАУКА В ОБЛАСТИ
ЗАРАЗИТЕЛЬНЫХ БОЛЕЗНЕЙ

Госиздат ССР Армении
Эривань, 1929 г.

616.9
7-15